ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/29 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

29 նոյեմբերի 2019թ.
ժամը. 14:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ռ. Անդրեասյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Ս. Մելքոնյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

(Մ. Առաքելյան)

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/29» ծածկագրով է հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2019 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը 14:30-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների գնման նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Ջրային հոսքերի կարգավորման փականներ	15000000 (տասնհինգ միլիոն)
2	Պտտվող սկավառակով փականներ	45000000 (քառասունհինգ միլիոն)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/29» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	**Մասնակիցների անվանումը**
1	«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
3	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ
4	«ИПК и УП» ЕООД

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցները www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Մասնակիցների առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
Չափաբաժին N1 Ջրային հոսքերի կարգավորման փականներ			
1	«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ	15829000,00 ՀՀ դրամ	18994800 ՀՀ դրամ
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	17500000,00 ՀՀ դրամ	21000000,00 ՀՀ դրամ
3	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ	4666666,67 ՌԴ ռուբլի 34813333,33 ՀՀ դրամ	5600000 ՌԴ ռուբլի 41776000,00 ՀՀ դրամ
4	«ИПК и УП» ЕООД	29013 ԱՄՆ դոլար 13841522 ՀՀ դրամ	29013 ԱՄՆ դոլար 13841522 ՀՀ դրամ
Չափաբաժին N2 Պտտվող սկավառակով փականներ			
1	«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ	40832000,00 ՀՀ դրամ	48998400,00 ՀՀ դրամ
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	45000000,00 ՀՀ դրամ	54000000,00 ՀՀ դրամ
3	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ	6500000,00 ՌԴ ռուբլի 48490000,00 ՀՀ դրամ	7800000,00 ՌԴ ռուբլի 58188000,00 ՀՀ դրամ
4	«ИПК и УП» ЕООД	54672 ԱՄՆ դոլար 26082918 ՀՀ դրամ	54672 ԱՄՆ դոլար 26082918 ՀՀ դրամ

«ԱԼԻՈՆ» ՍՊԸ հանդիսանում է ՌԴ ռեզիդենտ և գնային առաջարկը ներկայացրել է ՌԴ ռուբլով: Մյուս մասնակիցների գների հետ համեմատության համար նրա առաջարկված գները փոխարկվել են ՀՀ դրամի, 29.11.2019 թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով՝ 7.46 դրամ 1 ՌԴ ռուբլու համար:

«ИПК и УП» ԵՕՕԴ հանդիսանում է Չեխական Հանրապետության ռեզիդենտ և գնային առաջարկը ներկայացրել է ԱՄՆ դոլարով: Մյուս մասնակիցների գների հետ համեմատության համար նրա առաջարկված գները փոխարկվել են ՀՀ դրամի, 29.11.2019 թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով՝ 477,08 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար:

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները՝

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի հայտում մասնակիցը ապրանքի ամբողջական նկարագրությունը ներկայացրել է թերի՝ նշված չեն կոնկրետ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, չկա տեղեկատվություն օգտագործված նյութերի մասին, խցուկի տեսակն ու նյութը տարբերվում է հրավերով պահանջվածից:

«Էյչ Գրուպ» ՍՊԸ հայտում մասնակիցը ապրանքի ամբողջական նկարագրությունը ներկայացրել է թերի՝ նշված չեն կոնկրետ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, հստակ չէ ներկայացված լիսեռ-իրան հանգույցի հերմետիկացումը, փականի կառուցվածքը տարբերվում է հրավերով պահանջվածից:

«ԱԼԻՈՆ» ՍՊԸ հայտում մասնակիցը մասնակցության հայտերը ներկայացրել է DOC ձևաչափով, իսկ հրավերով պահանջվում էր, որ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները հայտը ներկայացնում են բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակով, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

«ИПК и УП» ԵՕՕԴ հայտում մասնակիցը ապրանքի ամբողջական նկարագրությունը ներկայացրել է թերի՝ նշված չեն կոնկրետ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, պահանջվող միակտոր լիսեռի փոխարեն ներկայացվել է ոչ ամբողջականը, խցուկի նյութը տարբերվում է հրավերով պահանջվածից:

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց՝</u>

Նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացում «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ, «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «ИПК и УП» ԵՕՕԴ ընկերություններին առաջարկել ներկայացնելու արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.5 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/29» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնահատող հանձնաժողովի՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 05.12.2019թ ժամը 12:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ռ. Անդրեասյան

_____ Ս. Մելքոնյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան